# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/5

ք. Երևան «07» 06 2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Շինսերտիֆիկատ>> ՍՊԸ-ն, (այսուհետ՝ Կատարող) ի դեմս տնօրեն Ա. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 6-ի N741-Ն որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում մոդուլային տիպի մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Եթե պայմանագրի N 5 հավելվածով (Աղյուսակներ N 1 և N 2) կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի համար սահմանված երաշխիքային ժամկետների ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա տեխնիկական հսկողություն իրականացնող անձը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 9 600 000 (ինը միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

### 4.3 Կանխավճարի տրամադրման պայմանները և մարումը

4.3.1 Պայմանագրի գնից՝ մինչև 25%-ի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել Կատարողի բանկային հաշվին որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում (սույն հրավերի հավելված N 5.2), որը չի կարող ավել լինել տվյալ տարվա համար հատկացված գումարից:

4.3.2 Կատարողը կանխավճար ստանալու վերաբերյալ գրությամբ Պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի չափի, դրա շրջանակներում մատուցման ենթակա ծառայության և ժամկետների վերաբերյալ հիմնավորումներ:

4.3.3 Պատվիրատուն կանխավճար հատկացնում է պատասխանատու ստորաբաժանման եզրակացության հիման վրա:

4.3.4 Ներկայացվող բանկային երաշխիքի գործողության ժամկետը պետք է առնվազն 90 աշխատանքային օրով ավելի լինի Կատարողի կողմից կանխավճարի գումարի չափով կատարվելիք աշխատանքների ժամկետից:

4.3.5 Կատարողի կողմից ներկայացվող բանկային երաշխիքում պարտադիր պետք է նշված լինի Պատվիրատուի՝ Կատարողի կողմից մատուցման ենթակա ծառայության ժամկետների խախտման դեպքում կանխավճարի հետգանձման իրավունքը:

4.3.6 Կանխավճարի մարումն իրականացվում է ծառայության հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել՝ է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում բանկային երաշխիքի ձևով ներկայացրած ապահովման ժամկետի երկարաձգումը հավաստող փաստաթղթի առկայությամբ):

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝

ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1, N 4 և N 5 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Հաջորդող տարիների ծառայությունները կմատուցվեն այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.14 Որակավորման ապահովման գումարը նվազեցվում է, եթե առկա են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 26-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | ԿԱՏԱՐՈՂ՝ |
|---|---|
| ՀՀ քաղաքաշինության կոմիտե | «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 | ՀՀ ք. Երևան, Կորյունի 19ա |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ |
| ՀՀ 900011037612 | Հ/Հ 1150009355815863 |
| ՀՎՀՀ 02565827 | ՀՎՀՀ 01528652 |
| Գլխավոր քարտուղար՝ | Տնօրեն՝ |
| _____________ Ա. Մկրտչյան (ստորագրություն) | _____________ Վ. Վարդանյան (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված N 1*
*«07» 06 2021թ. կնքված*
*N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/5 պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

***ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում մոդուլային տիպի մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության***

*ՀՀ դրամ*

| Ծառայության | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | մատուցման | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | չափման միավորը | ընդհանուր գին/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 71351540/527 | դրամ | 9 600 000 | 1 | ՀՀ Արմավիրի մարզ, Արևիկ համայնք | Շինմոնտաժային աշխատանքների ավարտի հետ |

| | |
|---|---|
| | **Տեխնիկական բնութագիրը** |
| 1 | ***Շինարարության որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման բնութագիրը*** |
| | Աշխատանքների որակի /շինմոնտաժային աշխատանքների կատարման բոլոր փուլերում/ տեխնիկական հսկողության /այսուհետ՝ Հսկողություն/ **խորհրդատվական** ծառայության մատուցում՝ <Քաղաքաշինության մասին> ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշման, ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ թիվ 44 հրամանի, ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N11-Ն հրամանի համաձայն |
| 2 | ***Հսկողության ենթակա աշխատանքների անվանումը*** |
| | Կից ներկայացվող Ծավալաթերթով նախատեսված աշխատանքներ |
| 3 | ***Տեխնիկական առաջադրանք*** |
| | **Տեխնիկական** հսկողության իրականացում Պատվիրատուի կողմից սահմանվող պարտավորությունների համաձայն (**Հավելված N 4)** |
| | Առանձին տեսակի շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության և կատարողական ակտերի ներկայացման ապահովում հիմնական լիցենզիային կից ներկայացվող ներդիրներում ընդգրկված մասնագետների միջոցով և գրավոր հաստատմամբ՝ ճարտարագետ-շինարարի, ճարտարագետ-էներգետիկի, ճարտարագետ-էլեկտրիկի, ճարտարագետ-հիդրոտեխնիկի կողմից՝ յուրաքանչյուրն իր կողմից վերահսկման ենթակա շինաշխատանքների համար |
| | Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով կատարվող աշխատանքների համապատասխանության ապահովում նախագծային լուծումներին, շինարարական նորմերին ու կանոններին |
| | Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով օգտագործվող նյութական ռեսուրսների որակը հավաստող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև օգտագործվող նյութերը, իրերը և կառուցվածքների որակը, աշխատանքների կատարման տեխնոլոգիաները ստանդարտներին, տեխնիկական և նորմատիվ փաստաթղթերի այլ պահանջներին համապատասխանության ապահովում |
| | Հսկողական ստուգման միջոցով իրականացվող աշխատանքների կատարման ժամկետների համապատասխանության, ինչպես նաև թերությունների բացահայտման և վերացման ապահովում |
| | Հսկողական չափագրությունների միջոցով փաստացի կատարված շինմոնտաժային աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների և հաշվարկների համապատասխանության ապահովում, **ամենամսյա** հաշվետվությունների ներկայացում: Ընդ որում, առանձին տեսակի շինարարական աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունը մատուցվում է պատասխանատու անձանց՝ համապատասխան որակավորմամբ մասնագետ-հսկիչների կողմից: |

| | | |
|---|---|---|
| | 1. Օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի ամենօրյա ռեժիմով՝ շինարարական հրապարակում պատասխանատու անձանց անմիջական մասնակցությամբ:<br>2. Օբյեկտի ինժեներական համակարգերի կառուցման նկատմամբ հսկողությունը պետք է իրականացվի հաստատված նախագծով նախատեսված տեխնոլոգիական հաջորդականությանը համապատասխան և տվյալ աշխատանքների համար սահմանված ժամանակահատվածում:<br>**3. _Օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության կազմակերպությունը (պատասխանատուն- հսկիչը, խորհրդատուն) պետք է սեփական ռեսուրսներով և միջոցներով իրականացնի կառուցվող օբյեկտի կառուցվածքների կամ նրանց առանձին մասերի (այդ թվում սարքավորումների, համակարգերի, ցանցերի և սարքերի ) լաբորատոր փորձարկումները և նմուշառումները, ինչպես նաև ապահովի դրանց արդյունքների ներկայացումը Պատվիրատուին՝ ամսական հաշվետվությունների և/կամ շինարարական ակտերի հետ ներկայացվող առանձին հաշվետվությունների տեսքով:**<br>**_ Լաբորատոր փորձարկումների քանակը, ձևերը և մեթոդաբանությունը պետք է իրականացվեն համաձայն պատվիրատուի պահանջի և ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի:**<br>**_ Նշված փորձարկումները պետք է ապահովեն տվյալ օբյեկտի համար նախատեսված փորձարկման ենթակա աշխատանքների և առանձին տեսակի նյութերի ամբողջ ծավալը:**<br>4. Օբյեկտի ավարտից հետո՝ խորհրդատուն պետք է ներկայացնի շինաշխատանքների ամբողջ ընթացքի վերաբերյալ ամփոփ հաշվետվություն և եզրակացություն այն մասին, որ օբյեկտը կառուցվել է ՆՆՓ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: | |
| | Կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում | |
| | Պատվիրատուին ներկայացվող ամսեկան հաշվետվություններում պարտադիր պետք է նշված լինեն շինարարի կողմից շինարարական աշխատանքները կատարելու անհնարինության մասին տեղեկատվություն՝ նշելով չաշխատած օրերի քանակը և դրանց պատճառները, եթե այդպիսիք առկա են: | |
| | Ծառայության մատուցման ժամկետը | |
| | Սկիզբը | Ավարտը |
| | Շինարարական աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման համար կնքված պայմանագրերից (համաձայնագրերից) վերջինի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրը | Շինմոնտաժային աշխատանքների ավարտի հետ |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011037612
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

------------------------------ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ՝**

«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Կորյունի 19ա
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150009355815863
ՀՎՀՀ 01528652
Տնօրեն

------------------------------ Ա. Վարդանյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
« 07 » 06 2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/5 պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71351540/527 | ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում մոդուլային տիպի մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն | - | - | - | - | - | | 4 750 000 | 4 750 000 | 4 750 000 | 9 600 000 | 9 600 000 | 9 600 000 | 9 600 000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011037612
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար

________________ Ա. Մկրտչյան
(ստորագրությունը)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ՝**

«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Կորյունի 19ա
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150009355815863
ՀՎՀՀ 01528652
Տնօրեն՝

________________ Ա. Վարդանյան
(ստորագրությունը)

Կ.Տ.

Հավելված N 3
« 07 » 06 2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/5 պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ______________________ | հհ______________________ |
| հվհհ ______________________ | հվհհ______________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.

Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 3.1
« 07 » 06 2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/5 պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ______________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________-ին կնքված N ______________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ___________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց** |
|---|---|
| | հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
| ______________ ազգանուն, անուն | ______________ ազգանուն, անուն |
| ______________ ստորագրություն | ______________ ստորագրություն |

Հավելված N 4
« 07 » 06 2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/5 պայմանագրի

# Ծառայության մատուցման մեթոդաբանություն

| Հ/Հ | Աշխատանքի անվանումը |
|---|---|
| 1 | 2 |
| | **Համառոտ նկարագրություն** |
| | Նոր մոդուլային տիպի մսուր-մանկապարտեզը նախատեսվում է կառուցել ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում: Նոր մսուր-մանկապարտեզի մակերեսն ըստ ներկայացված ծավալաթերթի: Մանկապարտեզի շինարարական աշխատանքները ներառում են՝<br>➢ Համաշինարարական աշխատանքներ (հողային, ե/բ կառուցվածքներ, տանիք, արտաքին և ներքին հարդարման, ջեռուցման, օդափոխության տաք և սառը ջրի մատակարարման ցանց, լուսավորման ցանց, կոյուղի, հրդեհի ահազանգման համակարգի կառուցման և այլ աշխատանքներ):<br>➢ Մեր ընկերության տեխնիկական հսկողություն իրականացնող անձնակազմը բավականին մեծ է, ըստ այդմ շին հրապարակում աշխատանքների հսկման գործընթացը անխափան իրականացնելու համար անհրաժեշտության դեպքում տեղամասի նշանակված տեխսկիչներից ցանկացածը կարող է փոխարինվել համարժեք որակավորում ունեցող անձով: |
| 1 | **Հողային աշխատանքներ (հանույթ, հարթեցում և հետլիցք)** |
| | Այս բաժնում ընդհանուր նկարագրվում են այն հողային աշխատանքները, որոնք կապված են հանույթի, հողային պաստառների հարթեցման կամ հետլիցքի աշխատանքների հետ:<br>Հողային աշխատանքների հետ կապված հետազոտությունները և լաբորատոր փորձարկումները միտված են ստուգելու և հավաստելու կատարված աշխատանքների համապատասխանելիությունը հաստատված նախագծերին, տեխնիկական մասնագրերին և մասնավորապես ծրագրի երկրաբանական հաշվետվության առաջարկություններին:<br>Գրունտը, որպես փոփոխական նյութ շատ զգայուն է խոնավության տատանումների նկատմամբ, և կարիք ունի հատուկ ուշադրության նախագծա-նորմատիվային փաստաթղթերի համապատասխան որակ ստանալու համար: Ըստ դրա գրունտների լաբորատոր փորձարկումները պետք է դառնան հողային աշխատանքների անբաժանելի մաս, որպես ցանկալի որակ ապահովելու երաշխավոր:<br>Հողային աշխատանքների հետ կապված որակական չափանիշեր ստանալու համար տեղամասի տեխնիկական հսկիչը պարտավոր է.<br>• Ստուգել հաստատված հատակագծերը, մասնագրերը և երկրաբանական հաշվետվությունը:<br>• Կատարի նշումներ շին հրապարակում աշխատող շինարարական տեխնիկայի վերաբերյալ:<br>• Լաբորատոր կամ դաշտային փորձարկումների միջոցով ստուգել հանույթի նախագծային ամենացածր նիշի գրունտների կրողունակությունը:<br>• Լաբորատոր փորձարկումների միջոցով ստուգել հետլիցքի գրունտների դասակարգումը և նրանց համապատասխանելիությունը տեխնիկական մասնագրերի պահանջներին:<br>• Ստուգել հետլիցքի կամ հարթեցնող շերտի նյութի որակական համապատասխանելիությունը տեխնիկական մասնագրերին, խտությունները և շերտերի հաստությունները (հզորությունները):<br>• Մասնակցի նմուշառման աշխատանքների և ստուգել որ հողային պաստառի, հանույթի հետլիցքիկամ այլ հանքերից բերված հետլիցքի գրունտների նմուշները առաքվել են նյութերի փորձարկման լաբորատորի:<br><br>**1.1 Լաբորատոր փորձարկումներ**<br>Լաբորատոր փորձարկումները ներառում են.<br>• Որոշել գրունտի նմուշների հատիկաչափական կազմը և ստուգել գրունտի այլ հատկություններ, ըստ տեղամասի տեխնիկական հսկիչի կամ Պատվիրատուի պահանջով:<br>• Որոշել գրունտի օպտիմալ խոնավության և չոր խտության կապը կամ այլ փորձարկումներ եթե պահանջվում է: |

| | |
|---|---|
| | • Դաշտային պայմաններում որոշել հետլիցքի նյութի խտացման աստիճանը:<br>• Տեղամասի տեխնիկական հսկիչի ցուցումներով պարբերաբար ստուգել հանույթի հետլիցքի գրունտի որակական հատկանիշները: |
| 2 | **Բետոնային աշխատանքներ** |
| | Երկաթբետոնյա կառուցվածքների բետոնի որակի վրա վրա ազդում են մի շարք գործոններ: Ըստ դրա որակի հսկողությունը բաժանվում է երկու փուլի.<br>• Շին հրապարակ բերվող բետոնը ստուգվում ստանդարտ լաբորատոր փորձարկումների միջոցով և ստացված արդյունքները համեմատվում են նախագծային փաստաթղթերի և տեխնիկական մասնագրերի պահանջների հետ:<br>• Բետոնացման աշխատանքների պատշաճ իրականացում և բետոնի խնամք:<br>Բետոնային աշխատանքների հետ կապված որակական չափանիշներ ստանալու համար տեղամասի տեխնիկական հսկիչը պարտավոր է ստուգել.<br>• Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի և տեխնիկական մասնագրերի համապատասխանելիությունը, նորմատիվային փաստաթղթերի հետ:<br>• Մասնակցել բետոնի կազմի ընտրության աշխատանքներին ըստ անհրաժեշտության:<br>**2.1 Վիզուալ դիտարկումներ և լաբորատոր փորձարկումներ**<br>Շին հրապարակում որակի տեխնիկական հսկիչը պարտավոր ստուգել.<br>• Կաղապարների չափերի և ձևերի համապատասխանելիությունը:<br>• Կաղապարների մաքրությունը և խնամքը համապատասխանում են ներկայացվող պահանջներին մինչև բետոնի լցնելը կաղապարների մեջ:<br>• Ստուգել շինհրապարակ առաքված բետոնի կոշտությունը:<br>• Ստուգել բետոնի ջերմաստիճանը և այլն:<br>• Բետոնի նմուշառման աշխատանքների համապատասխանելիությունը նորմատիվային փաստաթղթերի պահանջներին: |
| 3 | **Ամրանային աշխատանքներ** |
| | Երկաթբետոնե կառուցվածքներում օգտագործվող ամրանի շարունակական կամ պարբերական ստուգումները պետք է հավաստեն մատակարարի արտադրանքի համապատասխանելիությունը նախագծային, նորմատիվային կամ տեխնիկական մասնագրերի պահանջներին: Այս աշխատանքները իրականացվում են որակի հսկիչի (վիզուալ դիտարկումներ) և նյութերի փորձարկման լաբորատորիայի հետ համատեղ:<br>**3.1 Վիզուալ դիտարկումներ ևլաբորատոր փորձարկումներ**<br>Շին հրապարակում որակի տեխնիկական հսկիչը պարտավոր ստուգել.<br>• Շինհրապարակ առաքված ամրանային ձողերի յուրաքանչյուր խմբաքանակի չափերը և դասը ըստ մասնագրերի կամ նախագծի:<br>• Լաբորատոր փորձարկումների միջոցով ստուգել ամրանների համապատասխանելիությունը ըստ արտադրանքի տեխնիկական մասնագրերում նշվող պահանջների:<br>• Վիզուալ ստուգել շին հրապարակ առաքված ամրանների մակերևույթները:<br>• Կաղապարներում ամրանացանցերի տեղադրման ընթացքում ստուգել դրանց ուղղությունները, եռակցվող հանգույցները և այլն:<br>• Կաղապարներում ամրանացանցերի տեղադրելուց հետո և բետոնի լցնելու ընթացքում ստուգել, որ ամրանացանցը հաստատուն դիրքում է և ամրացված է բավարար չափով:<br>• Մասնակել նմուշառման աշխատանքներին և հետևել որպեսզի նմուշները պատշաճ կերպով առաքվեն փորձարկման լաբորատորիաներ: |
| 4 | **Քարի շարվածք** |
| | Ըստ այս տեսակի աշխատանքների բնույթի լաբորատոր փորձարկումները ներառում են.<br>• Քարի շարվածքների կամ բետոնե աղյուսների որակի ստուգում և դրանց համապատասխանելիությունը տեխնիկական մասնագրերին:<br>• Լցանյութային կամ կապակցող խառնուրդների նյութերի (ցեմենտ, ավազ, անկեռային ձողեր, խիճ) համապատասխանելիությունը մասնագրերին և այլն: |
| 5 | **Հարդարման աշխատանքներ** |
| | Ներքին հարդարման աշխատանքները իրենց ծավալով և տեսակով ներկայացված են նախագծային փաստաթղթերում: Այս աշխատանքները իրենց մեջ ներառում են հատակի ցեմենտ-ավազե հարթեցնող շերտերը, պատերի հարդարումը տարբեր տեսակի մածիկներով, |

| | |
|---|---|
| | գաջի աշխատանքները և այլն: <br> Այս աշխատանքների իրականացման ընթացքում որակի պատասխանատու տեխնիկական հսկիչը պարտավոր է. <br> • Ստուգել աշխատող անձնակազմի որակավորումը: <br> • Ստուգել և անհրաժեշտության դեպքում (նյութերի փորձարկման լաբորատորի ուղարկել) հարդարման համար նախատեսված նյութերի համապատասխանության սերտիֆիկատները: <br> • Վիզուալ ստուգել հարդարվող մակերևույթների ողորկությունը և հայտնաբերված թերությունների դեպքում տալ համապատասխան ցուցումներ դրանց վերացման համար: |
| 6 | **Ինժեներական ցանցեր** |
| | Այս աշխատանքներն իրականացնելու ընթացում համապատասխան որակավորում ունեցող որակի տեխնիկական հսկիչը պարտավոր է. <br> • Մասնակցել շին հրապարակ նեմուծված ապրանքների (տարբեր տեսակի խողովակներ և դրանց կցամասեր, օդափոխության համակարգեր, էլեկտրական սարքավորումներ և այլն ) հանձնման ընդունման աշխատանքներին՝ <br> • Ստուգել դրանց համապատասխանությունը նախագծային փաստաթղթերին և տեխնիկական մասնագրերին: <br> • Ստուգել դրանց մոնտաժման աշխատանքների որակական հատկանիշները: <br> • Թերությունների հայտնաբերման դեպքում տալ համապատասխան ցուցումներ: |
| 7 | **Ասֆալտաբետոն** |
| | Այս աշխատանքներն իրենցից ներկայացնում են շինության հարակից տարածքում նախատեսված բարեկարգման աշխատանքների անբաժանելի մաս: Սրանց թվում են շինության մոտեցնող ավտոճանապարհները, բակային տարածքները, խաղահրապարակները և այլն: <br> Այս տեսակ աշխատանքների հսկողությունը կայանում է ասֆալտաբետոն փռող անձնակազմի որակավորման և շիհրապարակ բերվող ասֆալտաբետոնը մատակարարող ընկերության արտադրանքի համապատասխանելիությունը տեխնիկական մասնագրերին: <br> Տեղամասի տեխնիկական հսկիչը պարտավոր է ստուգել. <br> • Ստուգել հաստատված գծագրերը և տեխնիկական մասնագրերը: <br> • Ստուգել նյութերի սերտիֆիկատները և դրանց համապատասխանելիությունը: <br> **7.1 Լաբորատոր փորձարկումներ** <br> Տեղամասի տեխնիկական հսկիչը պարտավոր է. <br> • Մասնակցել լաբորատոր փորձարկումների համար իրականացվող նմուշառման աշխատանքներին: <br> • Մասնակցել ասֆալտաբետոնի կազմի ընտրության լաբորատոր փորձարկումների աշխատանքներին: <br> • Լաբորատոր փորձարկումների տվյալներով ստուգել ասֆալտաբետոնի ծածկի ներքևի հողային շերտերի համապատասխանելիությունը տեխնիկական մասնագրերի պահանջներին և այլն: |
| 8 | **Փորձարկումներ և հսկողության գրաֆիկ (համաձայն *Աղյուսակի)** |
| | Փորձարկումների և հսկողությունների սահմանման գրաֆիկը պետք է կազմվի Պատվիրատուի և Կապալառուի հետ համատեղ կամ նշվի պայմանագրի հավելվածներով կամ այլ ձևերով: Այս փորձարկումների գրաֆիկի կազմումը ուղղակիորեն կապված է շինարարության տևողության և փաստացի աշխատանքների առաջընթացի հետ: Խորհրդատուն փորձարկումների և հսկողության գրաֆիկը կսահմանի ըստ փաստացի աշխատանքների առաջընթացի: |
| 9 | **Աշխատանքների ընդունում** |
| | Տվյալ ժամանակահատվածում Կապալառու ընկերության կողմից իրականացված փաստացի աշխատանքների ծավալները ստուգվում են Կապալառու ընկերության ներկայացուցչի (աշղեկ և այլն), որակի տեխ հսկողություն իրականացնող թիմի ներկայացուցչի և ըստ ցանկության պատվիրատուի ներկայացուցչի մասնակցությամբ: Ստուգված ծավալների հիման վրա Կապալառու ընկերությունը կազմում է կատարողակ ակտ, որին պարտադիր կցվում են ծածկված աշխատանքների ակտերը (եթե համապատասխան աշխատանք իրականացվել է), լաբորատոր փորձարկումների արձանագրությունները (եթե տվյալ ժամանակահատվածում իրականացվել են) և այլ անհրաժեշտ փաստաթղթեր: Հավաքագրված փաստաթղթերը պահանջված օրինակների քանակով սահմանված ժամանակամիջոցում հանձնվում են պատվիրատուի ներկայացուցչին: |

*Աղյուսակ

## Լաբորատոր փորձարկումների պլան

| Նկարագրություն | Չ/Մ | Ծավալաթերթի ծավալ | Փորձարկումների քանակ |
|---|---|---|---|
| Գրունտի փորձարկումներ | մ$^3$ | 104 | 4 |
| Հիմքերի պատրաստման աշխատանքներ | | | |
| Նկարագրություն | Չ/Մ | Ծավալաթերթի ծավալ | Փորձարկումների քանակ (յուրաքանչյուր 50 մ$^3$ -ի համար մեկ նմուշ բետոնի համար, 1 նմուշ 20 տ ամրանի համար) |
| Խամքարաբետոնե հիմքերի իրականացում B7.5 դասի բետոնով | մ$^3$ | 41 | 1 |
| Միաձույլ ե/բ հիմքերի իրականացում կառուցում B 25 դասի բետոնով | մ$^3$ | 104 | 2 |
| Ամրան A500 C | տ | 6.29 | 1 |
| Ամրան Ac1 | տ | 1.9 | 1 |
| Այլ լաբորատոր փորձարկումներ | | | |
| Բետոնի ամրության ստուգում չքայքայող առաձգական հետադարձի մեթոդով (Schmidt hammer) | ըստ կոնստրուկցիայի | - | 6 |
| Եռակցման կարանների տեսողական զննում | մ | - | 1,500 |
| Բետոնի ամրության որոշում ե/բ կոնստրուկցիայի հորատված զլանի միջոցով | հատ | - | 2 |
| Նախագծի և փաստացի կառույցի էներգաէֆեկտիվության հաշվարկ և սերտիֆիկացման աշխատանքներ | հատ | - | 1 |
| Ասֆալտբետոնե խառնուրդի ստուգում | շերտ | - | 1 |
| Ասֆալտբետոնե կեռների փորձարկում | հատ | - | 1 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011037612
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

________________ Ա. Մխոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**
«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Կորյունի 19ա
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150009355815863
ՀՎՀՀ 01528652
Տնօրեն՝

________________ Ա. Վարդանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 5*
*«07» 06 2021թ.կնքված*
*N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/5 պայմանագրի*

**Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջներ***

*Աղյուսակ N 1*

| Հ/Հ | Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված նյութեր | Նախագծողի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ /տարի/ |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | **Կոնստրուկիաներ** | |
| 1 | Շենքի կրող կոնստրուկցիաների շահագործման հաշվարկային ժամկետ/ | 50 |
| | **Ջերմամեկուսիչներ** | |
| 2 | Բազալտե հանքաբամբակից և էքստրուդացված փրփրապոլիստիրոլի ջերմամեկուսիչ նյութեր | 50 |
| | **Ներքին ջրամատակարարում և կոյուղի** | |
| 3 | Լվացարանի ծորակ | 1 |
| 4 | Լվացարանի ծորակ խառնարան | 1 |
| 5 | Խոհանոցակոնքի ծորակ խառնարան | 1 |
| 6 | Ոչ ստացիոնար տեղակայված ցնցուղ խառնարան | 1 |
| 7 | Լվացարան սիֆոնով | 1 |
| 8 | Լվացարան սիֆոնով մանկական | 1 |
| 9 | Խոհանոցակոնք չժանգոտվող սիֆոնով | 1 |
| 10 | Տակդիր սիֆոնով | 1 |
| 11 | Տակդիր սիֆոնով մանկական | 1 |
| 12 | Զուգարանակոնք թեք թողարկով, ցածր տեղակայված լվացման տակառիկով | 1 |
| 13 | Զուգարանակոնք թեք թողարկով, ցածր տեղակայված լվացման տակառիկով մանկական | 1 |
| | **Էլեկտրալուսավորություն** | |
| 14 | Լուսադիոդային լուսատու 36Վտ,առաստաղային<br>Ձևը քառակուսի 595x595x55մմ լուսային հոսքը 3318Լմ,<br>լուսային արդյունավետությունը 92Լմ/Վտ, լույսի ջերմաստիճանը 4100K<br>լուսահաղորդման ինդեքսը 80 | 1 |
| 15 | Լուսադիոդային լուսատու18Վտ առաստաղային, Ձևը ուղղանկյուն 595x295x50մմ լուսային հոսքը 2100Լմ լուսային արդյունավետությունը 116Լմ/Վտ լույսի ջերմաստիճանը 4100K լուսահաղորդման ինդեքսը 80 | 1 |
| 16 | Լուսադիոդային լուսատու 27Վտ,IP54, Ձևը կլոր (Ф210մմ) լուսային հոսքը 2831Լմ լուսային արդյունավետությունը 105Լմ/Վտ լույսի ջերմաստիճանը 4100K լուսահաղորդման ինդեքսը 80 | 1 |
| 17 | Լուսադիոդային լուսատու ներկառուցված 10Վտ,IP64,<br>Ձևը կլոր (Ф155մմ), լուսային հոսքը 855Լմ լուսային արդյունավետությունը 86Լմ/Վտ լույսի ջերմաստիճանը 4100K լուսահաղորդման ինդեքսը 80 /սանհանգույց/ | 1 |
| 18 | Լուսադիոդային էվակուացիոն լուսատու Ձևը ուղղանկյուն (328x51մմ) ներկառուցված մարտկոցով 18Վտ | 1 |
| 19 | Ելքի LED նշան << Exit>> 3Վտ | 1 |

| Հ/Հ | Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված նյութեր | Նախագծողի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ /տարի/ |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | **Հրդեհային ազդանշանման համակարգ** | |
| 20 | Կառավարման գլխավոր վահանակ | 1 |
| 21 | Պահուստային սնուցման աղբյուր 12Վ, 1Ա | 1 |
| 22 | Երկլարանի գծի վերահսկիչ | 1 |
| 23 | Հասցեային ռելեային մոդուլ | 1 |
| 24 | Հասցեային ռելեային մոդուլ | 1 |
| 25 | Հասցեային ընդարձակիչ | 1 |
| 26 | Ծխի հասցեային ազդարար | 1 |
| 27 | Ջերմային հասցեային ազդարար | 1 |
| 28 | Ձեռքի ղեկավարմամբ հասցեային ազդասարք | 1 |
| 29 | Լույսաձայնային ազդարար/ներքին կիրարման/ | 1 |
| | **Կաթսաներ** | |
| 30 | Մեմբրանային ճնշումային ընդարձակման բաքի տեղադրում | 1 |
| | **Ֆոտովոլտային պանելների համակարգ** | |
| 31 | Եռաբևեռ եռաֆազ ինքնավար անջատիչ, ջերմային և էլ.մագնիսական խզիչներով, ՍԱՆՎ~380/220 Վ, ԻԱՆՋ=40 Ա | 1 |
| 32 | Փոփոխական հոսանքի գերլարման սահմանափակիչ եռաբևեռ եռաֆազ, 2-րդ դաս | 1 |
| 33 | էլեկտրական էլեկտրոնային դարձափոխիչային եռաֆազ հաշվիչ, երկսակագնային, 5 Ա | 1 |
| 34 | Եռաբևեռ եռաֆազ ինքնավար անջատիչ, ջերմային և էլ.մագնիսական խզիչներով, ՍԱՆՎ~380/220 Վ, ԻԱՆՋ=50 Ա | 1 |
| | **Արևային ջրատաքացուցիչ համակարգ** | |
| 35 | Արևային ջրատաքացուցիչ համակարգ, ներառված թերմոսիֆոն ոչ ճնշումային, ջերմային փոխարկիչների ձևը պարզ վակումային կոլբաներով՝ - 36 հատ, ընդհանուր տարողությունը 360լ, ներառյալ կոլբաները, արևային ջերմաէներգետիկ հզորությունը 2.88կՎտ, օժանդակ բաք-5լ, օժանդակ էլեկտրատաքացուցյր- 2.5կՎտ | 20 |

35* Արևային ջրատաքացուցիչ համակարգի կոլեկտորային վահանակի համար՝ 20 տարի, մնացած օժանդակ սարքավորումների համար 1 տարի երաշխիք:

*Այլուսակ N 2*

| N | Կապալառուի կողմից առաջարկվող սարքավորում /արտադրող, մոդել /առկայության դեպքում/, տեխնիկական բնութագիր/ | Չ.մ | Քանակ | Սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ /տարի/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | **Օդափոխություն** | | | |
| 1 | ZILON ZFO 100 p Կանալային օդափոխիչի տեղադրում Q=260 խմ/ժ, N=0..29կՎտ, n=2400 պտ/ր, G=3.8կգ | լրա կազմ | 3 | 6 ամիս |
| 2 | ZILON ZFO 100 p Կանալային օդափոխիչի տեղադրում Q=260 խմ/ժ, N=0..29 կՎտ, n=2400 պտ/ր, G=3.8կգ | լրա կազմ | 3 | 6 ամիս |
| 3 | ZILON ZFO 125 p Կանալային օդափոխիչի տեղադրում Q=385 խմ/ժ, N=0.70 կՎտ, n=2400 պտ/ր G=3.75կգ | լրա կազմ | 1 | 6 ամիս |

| N | Կապալառուի կողմից առաջարկվող սարքավորում /արտադրող, մոդել /առկայության դեպքում/, տեխնիկական բնութագիր/ | Չ.մ | Քանակ | Սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ /տարի/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 4 | ZILON ZFO 100 p Կանալային օդափոխիչի տեղադրում Q=260 խմ/ժ, N=0..29 կՎտ, n=2400 պտ/ր, G=3.8կգ | լրա կազմ | 1 | 6 ամիս |
| 5 | ZILON ZFO 250 E Կանալային օդափոխիչի տեղադրում Q=1300 խմ/ժ, N=0.56 կՎտ, n=2500 պտ/ր, G=5.7կգ, L=205мм | լրա կազմ | 1 | 6 ամիս |
| 6 | ZILON ZFO 160 p Կանալային օդափոխիչի տեղադրում Q=810խմ/ժ, N=0.56 կՎտ, n=2500 պտ/ր, G=5.7կգ, L=205мм | լրա կազմ | 1 | 6 ամիս |
| 7 | ZILON ZFO 100 p Կանալային օդափոխիչի տեղադրում Q=260 խմ/ժ, N=0..29 կՎտ, n=2400 պտ/ր, G=3.8կգ | լրա կազմ | 1 | 6 ամիս |
| 8 | ZILON ZFO 160 p Կանալային օդափոխիչի տեղադրում Q=810 խմ/ժ, N=0.56 կՎտ, n=2500 պտ/ր, G=5.7կգ, L=205мм | լրա կազմ | 1 | 6 ամիս |
| 9 | ZILON ZWA 150x150-2 Կանալային օդափոխիչի տեղադրում Q=150 խմ/ժ, N=0.56կՎտ, n=2500 պտ/ր, G=5.7կգ, L=205мм | լրա կազմ | 1 | 6 ամիս |
| 10 | Electrolux STAR EPVS-200<br>Օդի ներածման արտածման ռեկուպացիոն սարքավորում Q= 230/50 խմ/ժ N=140Վտ, n=2300պտ/ր | լրա կազմ | 40 | 2 |
| 11 | ZILON Electrolux STAR EPVS-1300<br>Օդի ներածման արտածման ռեկուպացիոն սարքավորում Q= 1280/40 խմ/ժ N=3.7, n=2720պտ/ր | լրա կազմ | 1 | 2 |
| | **Տեսադիտարկման համակարգ** | | | |
| 12 | Icatch RXH-1625AU-B Ultra, Թվային տեսաձայնագրիչ / H264 High Profile Compression, Full HD 1080p, Real time Recording # Playback, 480fps at 1080p# 960 fps at 960 H | լրա կազմ | 1 | 1 |
| 13 | PD-A4-B3.6 v.2.1.2 մատրիցա 1/3” OmniVision OV4689 պրոցեսոր NextChip (NVP2475) էկրանի բանաձևը՝ 2560x1440, AHD: 4 Մպ, ֆիքսված օբյեկտիվ 3.6 մմ, ինֆրակարմիր լուսատվությամբ, 20 մ OSD(coax): 2/3DNR, DWDR, BLC/HSBL, շրջանակը՝ մետաղական, պաշտպանվածության աստիճանը (IP66) շահորգծան ջերմաստիճանի Գունավոր տեսախցիկ 4ՄՊք,3.6մմ, ներքին տեղադրման,գիշեր-ցերեկ | լրա կազմ | 2 | 1 |
| 14 | HIKVISION, տեսահսկման տսախցիկ<br>Hikvision Hiwatch DS-T520C 3.6 mm Գունավոր տեսախցիկ 5ՄՊք,3.6մմ,40մ,IP67, արտաքին տեղադրման | լրա կազմ | 12 | 1 |
| | **Կաթսաներ** | | | |
| 15 | LUNA Duo-tec MP 1.50 Կոնդենսացիոն պատի գազի կաթսաի տեղադրում W=45.0Квт | լրա կազմ | 2 | 1 |
| 16 | DAB ,BPH 60/250.40M Շրջանառության պոմպ Q=12մա/ժ H=14մ | լրա կազմ | 2 | 1 |
| | **Ֆոտովոլտային պանելների համակարգ** | | | |
| 17 | Inverter GoodWe GW2000-NS Ներցանցային փոխակերպիչ, 2 ԱՀԿՈՒ-ով (MPPT), 2/2 գծային մուտքով, ՍՓ.ԱՆՎ~380/400 Վ, ՍՀ.ԱՌ-1080 Վ, 20 կՎտ | լրա կազմ | 1 | 5 |
| 18 | JA SOLAR Mono PERC ModuleՄիաբյուրեղային (perc տեխնոլոգիա) ֆոտովոլտային վահանակ, 120(60x2) կեսբջիջ, 5 հաղորդաձող (BB), 345 Վտ -0,+ 3%, 1684x1002x30 | լրա կազմ | 60 | 10 |

| N | Կապալառուի կողմից առաջարկվող սարքավորում /արտադրող, մոդել /առկայության դեպքում/, տեխնիկական բնութագիր/ | Չ.մ | Քանակ | Սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ /տարի/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | Կահույք | | | |
| 19 | АБАТ, էլ. սալօջախ 600x600x850 մմ, N = 9,2 կՎտ, 380 Վ | լրա կազմ | 2 | 1 |
| 20 | Սառնարանային պահարան 750x700x2010 N=0,32կվտ 220Վ, 650լ. | լրա կազմ | 1 | 1 |
| 21 | Primus FX 135 S<br>Լվացքի մեքենա, ավտոմատ, 15,0 կգ., 1400 պտույտ/րոպե | լրա կազմ | 2 | 1 |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011037612
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

______________________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ՝**

«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Կորյունի 19ա
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150009355815863
ՀՎՀՀ 01528652

Տնօրեն՝

______________________ Ա. Վարդանյան
(ստորագրություն)

Կ.Տ.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
"ARMBUSINESSBANK" CJSC

N 3315-02

«01» 06 20 21

**ԵՐԱՇԽԻՔ**
**(պայմանագրի ապահովում)**

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ի միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/5 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 960,000 (ինը հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/5 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով (համաձայնագրով) նախատեսված ծառայության մատուցման վերջնաժամկետը, ներառյալ երաշխիքային ժամկետը լրանալու օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ուշ քան 31.05.2022թ.:

Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/5 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահ՝ Ա. Սարգսյան

Գլխավոր հաշվապահ՝ Ն. Սարգսյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 48; Հեռախոս՝ (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Էլ. փոստ՝ info@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Налбандян 48, 0010, Ереван, РА; Телефон: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл. почта: info@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 48 Nalbandyan, 0010, Yerevan, Armenia; Telephone (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; E-mail: info@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am

ABB

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
"ARMBUSINESSBANK" CJSC

N 3316-02

«01» 06 2021

# ԵՐԱՇԽԻՔ
## (որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/5 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրիցիպալ) կողմից կնքվելիք N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/5 պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 1,440,000 (մեկ միլիոն չորս հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Որակավորման ապահովման գումարը նվազեցվում է, եթե առկա են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 26-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները:

Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/5 ծածկագրով կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով (համաձայնագրով) նախատեսված ծառայության մատուցման վերջնաժամկետը լրանալու օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ուշ քան 31.05.2022թ.:

Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/5 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 48; Հեռախոս՝ (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Էլ. փոստ՝ info@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Налбандян 48, 0010, Ереван, РА; Телефон: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл. почта: info@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 48 Nalbandyan, 0010, Yerevan, Armenia; Telephone (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; E-mail: info@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահ՝ Ա. Սարգսյան

Գլխավոր հաշվապահ՝ Ն. Սարգսյան